# ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ





Ե՛վ ուսուցիչներին, և՛ ծնողներին միավորում է մեկ ընդհանուր նպատակ՝ ուսուցանել և կրթել երեխաներին: Ընտանիքի և դպրոցի միջև հաստատված փոխըմբռնման դեպքում այս հարցում հնարավոր է հասնել ցանկացած հաջողության:

| | | |
|---|---|---|
| Դասարանը՝ | 9-րդ | |
| Դասղեկը՝ | Հեղինե Արթուրի Այվազյան | |
| Դասարանի աշակերտների թիվը՝ | 7 | |
| | տղաների թիվը՝ 3 | աղջիկների թիվը՝ 4 |
| Էլեկտրոնային հասցե | a.heghine@gmail.com<br>hexine-1986@mail.ru | |
| Դասղեկի սպաժը տվյալ դասարանում | 3 | |
| 2021-2022 ուսպարվա խնդիրները | Իրականացված | Չիրականացված պատճառը |
| Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հաճախումներին և առաջադիմությանը: Հաճախակի հետևել դասարանի սաների վարքին և առաջադիմությանը: Ուսումնադաստիարակչական աշխատանքները լավ կազմակերպելու համար ձևավորել առողջ, համերաշխ կոլեկտիվ: Սերմանել հարգանք միմյանց, մեծերի և ուսուցիչների հանդեպ, պատասխանատվության զգացում՝ դասագրքերի և դպրոցական գույքի հանդեպ: Անհատական աշխատանք իրականացնել յուրաքանչյուր աշակերտի հետ: Դասերից և վարքից թույլ աշակերտների հետ իրականացնել անհատական զրույցներ, հետևողական աշխատանք: Լսել այլ առարկաների դասերը՝ աշակերտների պատրաստվածությունը ստուգելու նպատակով: | Իրականացվել է | --- |

## *Աշակերտի արտադասարանական գործունեությունը /խմբակ, ակումբ/*

| № | Աշակերտի ազգանուն, անուն, հայրանուն | Արտադասարանական գործունեությունը |
|---|---|---|
| 1. | *Ասատրյան Դավիթ Լեռնիկի* | *Մարտ առանց կանոնների ապ. խմբակ* |
| 2. | *Թունյան Անժելիկա Գագիկի* | *Արմաթ ինժեներական լաբորատորիա* |
| 3. | *Խանումյան Ռուզաննա Գարիկի* | *Արմաթ ինժեներական լաբորատորիա* |
| 4. | *Մաղաքյան Սամվել Կարենի* | *Արմաթ ինժեներական լաբորատորիա* |
| 5. | *Նավասարդյան Սոխակ Երվանդի* | |
| 6. | *Սարգսյան Գևորգ Տիգրանի* | |
| 7. | *Օհանյան Լիլիթ Արմենի* | *Ք. Սպենդիարյան, Երաժշտական դպրոց* |

## *Արտադասարանական աշխատանքների կազմակերպում*

| *Ամսաթիվ* | *Արտադասարանական միջոցառման անվանումը* | *Մասնակից աշակերտների , ծնողների և ուսուցիչների թիվը* | *Արդյունքը* |
|---|---|---|---|
| *01.09.2021թ.* | *Ողջո՛ւյն, դպրո՛ց /միջոցառում՝ նվիրված գիտելիքի օրվան/* | *համադպրոցական* | *Կատարված է* |
| *27.09.2021թ.* | *Լռության րոպե՝ Մեր խոնարհումը 44-օրյա պատերազմի զոհերին՝ դպրոցի «Հիշատակի» անկյունում:* | *համադպրոցական* | *Կատարված է* |
| | *Ծաղկադրում՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված համագյուղացի տղաների* | *IX - 7, XI -10 և XII -9 աշակերտներ, դասղեկներ* | |
| | | | |








*Դասղեկի համար ուսումնական աշխատանքային պլանը ուղենիշ է և թույլ է տալիս բաց չթողնել ոչ մի կարևոր պահ: Առաջադրանքների ցանկի ձևավորումից հետո անհրաժեշտ է պլանավորել այն գործողությունները, որոնց իրականացումը թույլ կտա հասնել դրված նպատակներին:*

*Դասղեկի գործունեության նպատակն է պայմաններ ստեղծել աշակերտի անհատականության ինքնազարգացման և ինքնաիրացման, հասարակության մեջ նրա հաջող սոցիալականացման համար:*

*Այս ուսումնական տարում հիմնական խնդիրներից մեկն էր. Դասընկերների միջև ընկերական հարաբերությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ անհատական զրույցներ են տեղի ունեցել թշնամական հարաբերությունների բոլոր դրսևորումների հետ, խրախուսվել է փոխօգնության ու կարեկցանքի դրսևորումը; իրականացվել է դասաժամերի համակարգ, որով դասարանի սովորողների մեծ մասը կարողացել է ցույց տալ իրենց դրական կողմեր.... Արդյունքում դասարանն ավելի համախմբված դարձավ:*

*Պարբերաբար ստուգումների արդյունքում պարզվել է, որ աշակերտները կատարում են իրենց առաջադրված դասարանական և տնային հանձնարարությունները, ինչպես նաև օգտվում են լրացուցիչ գրականությունից և համացանցից՝ հարստացնելով իրենց գիտելիքները:*

*Կատարվել են պլանավորված և չպլանավորված միջոցառումներ, աշխատանքներ համաձայն ուսումնական հաստատության դաստեկի տարեկան աշխատանքային պլանի:*

*2021-2022 ուստարում կատարվել են հետևյալ աշխատանքները.*

- *դաստեկի աշխատանքային ծրագրի կազմում*
- *դասագրքերով ապահովման հարցի կազմակերպում*
- *աշակերտների սոցիալական անձնագրերի կազմում*
- *կատարվել է նախասիրական, գեղարվեստական, երաժշտական, սպորտային և այլ խմբակներ հաճախող աշակերտների մասին տվյալների հավաքագրում*
- *վերահսկվել է աշակերտների պատրաստվածությունը դասերին և աշակերտին վայել տեսքով ներկայանալու հարցը*
- *աշակերտների ամենօրյա հաճախումների հաշվառում և բացակայող ու ուշացող աշակերտների ծնողներից դրանց պատճառների պարզաբանում*
- *աշակերտների տրվել է https://e-diary.emis.am/auth -ի անձնական ծածկագրերը և վերահսկվում է դրանից օգտվելու գործընթացը*
- *ուսումնադաստիարակչական գործընթացին և կարգապահությանը նպաստող աշխատանքների իրականացում*

*Կատարվել են հետևյալ աշխատանքները.*

- *անցկացվել են ծնողական ժողովներ, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝ 1. ծանոթացում ծնողների հետ և ծնողխորհրդի կազմի և նախագահի ընտրություն, 2. ծանոթացում ուսումնական պահանջներին և առանձնահատկություններին, 3. ծանոթացում ավարտական և կենտրոնացված քննությունների կարգին, 4. կազմակերպչական հարցեր*
- *դասարանական կոլեկտիվի ձևավորմանը նպաստել են դաստեկական ժամերին կազմակերպված հետաքրքիր զրույցները, բանավեճերը և մի շարք այլ միջոցառումներ*
- *առանձին զրույցներ են անցկացվել յուրաքանչյուր աշակերտի հետ, ինչն ապահովել է անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայր*
- *պարբերար կազմակերպվել են հանդիպումներ ծնողների հետ և խոսվել է նրանց հուզող հարցերի շուրջ և կազմակերպչական աշխատանքների մասին*
- *անհատական աշխատանքներ են տարվել աշակերտների հետ, եղել են այցելություններ նրանց բնակարաններ և զրույցներ ծնողների հետ*
- *պարբերաբար կատարվել են դասալսումներ տարբեր առարկաներից, որի նպատակն էր ծանոթանալ աշակերտների ակտիվությունը և մասնկցությանը դասապրոցեսին, ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդներին և դասի վարման հմտություններին*
- *աշխատանք է տարվել աշակերտների և ուսուցիչների միջև բարեկրացիական և ներդաշնակ հարաբերությունների ձևավորման համար*
- *առանձին զրույցներ են տարվել առողջական և վարքային խնդիրներ ունեցող աշակերտների հետ, ինչը դրական արդյունքներ է տվել*
- *կազմակերպվել է ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում*

Ձեռքբերումներից ու հաջողություններից բացի IX դասարանն ունի մի շարք թերություններ և բացթողումներ, ինչը շտկելու համար կատարվում են հետևողական աշխատանքներ աշակերտ-դասղեկ համագործակցությամբ: